

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա.
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ**

23) Խալանացած հայր կրնա՞յ
մկրտուիլ հայոց եկեղեցւոյ մէջ:

Եթէ խալանացած հայր կը ցանկայ
մկրտուիլ, ապա ան պէտք է նախ՝ իր
անձնաքարտին վրայէն փոխէ կրօնա-
կան պատկանելիութիւնը որպէս
քրիստոնեայ, երկրորդ՝ դիմէ Կ-
Պոլսոյ պատրիարքութեան հաստա-
տում ստանալով հայ ըլլալուն մասին,
երրորդ՝ անցնի նախապատրաստա-
կան-ուսուցողական շրջան։ Ի վերջոյ՝
ըոլորին ալ հասկնալի է, որ հայ-
կական միջավայրի մէջ մեծացած հայր
ունի այլ հոգեբանութիւն եւ մտածո-
ղութիւն քան՝ թուրքիոյ մէջ խա-
մութիւնը ընդունածը, որ երկար
տարիներ ընդհանրապէս առնչութիւն
չէ ունեցած հայկականութեան հետ։
Ալ չենք խօսիր կրօնական հայացք-
ներու տարբերութեան մասին։ Անոր
համար խալանացած հայր պէտք է
ունենայ քրիստոնեայ դառնալու
անհրաժեշտ գիտելիքները, որպէսզի
մկրտուելին ետք դառնայ Քրիստոսի
եկեղեցւոյ անդամ եւ քրիստոնեայ։
Անոնց հետ անհրաժեշտ է շփուիլ
առաւել սիրով, ուրախութեամբ եւ
ամէն ինչ ընել, որպէսզի անոնց մէջ
արթննայ ազգային գիտակցութիւնը։

24) Փոխնակ մայրութեամբ
ծնուած երեխան կը մկրտուի՞։

Մեր եկեղեցին տակաւին պաշտօ-
նական տեսակէտ չէ արտայայտած
փոխնակ մայրութեան վերաբերեալ,
մինչդեռ կաթոլիկ, Ռուս, Պուլկար,
Յոյն Ռուզափառ եկեղեցիները դա-
տապարտած են մարդկային վերա-
տաղողականութեան...

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՂՎՐԴԱՏՈՒ

ԻՆՉՊԵ՞Ս ՄՏՏԵԼ ԵՐԿԻՆՔ

Լաւ է քրիստոնեայ ընտանիքի մէջ
ծնած ըլլալը, բայց ո՞չ ոք խորիի, թէ
երկինք պիտի մտնէ լոկ որովհետեւ
քրիստոնեայ ընտանիքի մէջ ծնած է։
Կարեւոր է եկեղեցւոյ անդամ դառնալը,
բայց ո՞չ ոք բող կարծէ, թէ եկեղեցւոյ
անդամ դառնալով՝ անդամ դարձած կ'ըլլայ
Քրիստոսի մարմինին։ Անհրաժեշտ է
հաղորդուիլ Տիրոց մարմինով եւ արիւնով,
բայց ո՞չ ոք բող մտածէ, որ Յիսուսի
սրբարար մարմինն ու արիւնը ստանալով՝
կրնայ սրբացուիլ։ Պէտք է բարին գործել,
բայց ո՞չ ոք բող ենթադրէ, որ
բարեգործութեամբ կրնայ արդարանալ
Աստուծոյ դիմաց։ Կարեւոր է Սուրբ Գիրք
կարդալը, բայց ո՞չ ոք բող կարծէ, որ
ատիկա ապացոյց մըն է, որ մենք կը
սիրենք Յիսուսը։ Յիսուսը սիրող՝ կը
յանձնուի անոր։ Երբ մէկը յանձնուի
Յիսուսին, բող ամէն մարդ լաւ իմանայ, որ
այդպիսին համար է երկինքը։

ԱՂՕԹՔ

Տէր տուր ինծի զօրութիւն, բայց
զօրութեան հետ տկար ըլլալուն
գիտակցութիւնն ալ տուր, որպէսզի
ամէն ատեն ու ամէն բանի մէջ քեզի
վստահին։ Ամէն։

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերթը ա-
մէն Կիրակի կը քածնուի մեր ժողո-
վորդին, Եկեղեցիներու բանկալին
մօտ։ Նաև՝ Facebook-ի վրայ փետուել
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-
դամագրուելու համար։

ՀԱՍՑԵ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՈՍՔԻ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ՑՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱՇԽԱՆԵՐՈՒՄ ՀՈՅ
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2018

ԹԻՒ 46

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես.25.9-26.7: ԵՓ. 1.1-11:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ ԸՍ ԴՈՒԿԱՍՈՒ 9.44-50

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս
աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լաւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա.
մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»։ Սակայն աշակերտները
չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որ-
պէսզի չհասկնան։ Միւս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին։

Աշակերտները սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը։ Յիսուս
գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով
ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ եւ ով
որ զիս ընդունած է ընդունած կ'ըլլայ զիս դրկողը։ Որովհետեւ ով որ ձեր մէջ
ամենէն փոքրիկն է, ան է մեծը»։

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք, որ քու անունովդ դեւեր կը
հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»։

Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ամ որ հակառակ չէ
ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»։

ԻՍԿԱԿԱՆ ՄԵԾԸ

Ճշմարիտ մէծ մարդը ան է, որ կ'ապրի աստուածահանոյ կեանք մը առանց
սակայն յաւակնութիւնը ունենալու ինքնինք մէծ նկատելու։ Քրիստոնեայ մարդը
իր մեծութիւնը պէտք չէ տեսն իր ունեցած դիրքին, աթոռին կամ դրամին մէջ,
այլ՝ իր ապրած հաւատքի կեանքին եւ իր նմաններուն մատուցած իր ծառա-
յութիւններուն մէջ։ Մարդ արարածը այնքանով մէծ է որքանով աստուածակը եւ
մարդասէր է։ Երբեք մէծ պէտք չէ կոչել այն մարդը, որ չ'ապրիր հաւատքի
կեանք մը։ Բնաւ մէծ պէտք չէ նկատել այն մարդը, որ ոչնչութիւն կը սեպէ իր
նմանները եւ անոնց վրայ իշխել կը փորձէ։ Անձ կոչուիլ ուզող իր աշակերտնե-
րուն Քրիստոս փոքրիկի մը օրինակը տուալ որպէսզի սորվեցնէ անոնց եւ մեզի,
որ մեծնալու ճամբան փոքրանալ ընդունիլն է։ Դուն կ'ընդունի՞ս փոքրանալ։

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅԻՄԱԿ



Յիսուսկ բառը կը վերաբերի յիսուն քիւին: Ան իրապէս ալ յիսուն օրերու վրայ երկարող ժամանակամիջոց մըն է, որ կը կանխէ Աստուածայայտնութեան կամ Ծննդեան տօնը: Իրապէս ալ, Յունուար 6-էն դէպի ետ համրելով յիսուն օրեր, մենք պիտի յանգինք նոյեմբեր 18-ին՝ որ Յիսուսկի առաջին օրն է:

Հայաստանեայց եկեղեցին կը տօնէ Բարեկենդան Յիսուսկաց Պահոց, այսինքն՝ Յիսուսկի առաջին օրուան ամենէն մօտ զուգադիպող Կիրակին:

Ժամանակին Յիսուսկը, Մեծ Պահոցի նման ամբողջութեամբ պահէի շրջան մըն էր, սակայն այսօր անոր ընթացքին կը գտնուին պահէի երեք շաբաթներ միայն:

Առաջինը՝ Յիսուսկաց պահէ անունով, երկրորդը՝ Սուրբ Յակոբի պահէ, իսկ երրորդը՝ Ծննդեան:

ՈՍԿԵՊԵՆ ՀԱՄԱՐ

Յօր Աստուծոյ համար անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը՝ կառուտութեան մէջ եղող որբերուն եւ այրիներուն այցելու եւ օգնութեան ըլլալն է, եւ աշխարհին մէջ ապրելով հանդերձ ինքինը անարատ պահելու: (Յակոբոսի 1.27)

«Ընծայումն Ս. Աստուածածնի»

Մարիամ Աստուածածնին զաւակն էր Յովակիմի և Աննայի: Ըստ աւանդութեան, ան ուխտով ստացուած զաւակ ըլլալուն համար, ծնողքը իրենց ուխտին համաձայն՝ Մարիամը ընծայած են տաճարին երբ ան երեք տարեկան էր, որպէսզի հոն աստուածապաշտութեամբ զարգանայ ու տաճարին ծառայէ:

Այս նուիրման օրն է, որ կը յիշատակուի Աստուածածնի ընծայման օրը որ կը կատարուի ամէն տարի անշարժ թուականի մը՝ Նոյեմբեր 21-ին, որ օրն ալ հանդիպի այդ թուականը: Ընծայման տօնը Աստուածածնի նուիրուած տօններին մէկն է:

Անկէ անկախ կան նաեւ Աստուածածնի կեանքն ու տիպարը ծանօթացնող եւ յիշատակող այլ տօներ, ինչպէս՝ Յունութեան տօն, Ծնունդ Ս. Աստուածածնի, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտիի եւ Գիւտ տուփի:

Հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Ընծայումն Ս. Աստուածածնի տօնը կը զուգադիպի Զորեցարքի, 21 նոյեմբերին:

ՂԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ կը ՆՇԱՍԱԿՆ ՄԵՊ:

Մեղք կը նշանակէ՝ յանցանք, անիրաւութիւն, զանցարութիւն, անհնագանդութիւն Աստուծոյ, հակառակութիւն նշմարտութեան դէմ: Մեղքը ծագում առաւ մեր նախածնողաց՝ Ադամ եւ Եւայի անհնագանդութեան պատճառով: Այս առաջին մեղքը կը կոչուեցաւ սկզբանական կամ Ադամական մեղք, որ փոխանցուեցաւ իրենց սերունդին: Մարդուն նախանձորդ թշնամին՝ չարս սատանան մղեց մարդը անհնագանդութեան:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՔԱՇԹՐՈՒԹԻՒՆ

Քու սիրած կնոջդ հետ կեանք վայելէ քու ունայնութեան կեանքիդ բոլոր օրերուն մէջ... վասնզի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է:

Ժող.9.9

Ընտանիքը այր մարդուն սրբութիւն սրբութեանց է երկրի վրայ: Տան որմերէն ներս անիկա ինքզինք կը զատէ դուրսի աշխարհէն եւ դուռը կը գոցէ իր եւ իրեններուն վրայ: Հոն կ'ամբարուին իր ուժերը, կը նորոգուի իր եռանդը եւ կը գտնէ իր հանգիստը աշխատանքէն: Հոն է սրբավայրը իր հոգեւոր խոկումներուն, որոնցմէ ներշրնչուած՝ ան կը ստանձնէ բոլոր իր գործունելուններն ու պայքարները դուրսի աշխարհին հետ:

Ընտանիքը այն վայրն է, ուր սէրը կը բնակի: Աէրը հոն չի գիշերեր միայն, պատահական այցելութիւններ չի տար եւ ոչ իսկ հոն մնայուն իիւր է ան: Աէրը տան գլխաւոր դրան բանալին ունի, տէրն է անոր ամենակարեւոր անկիւնին, որ կը տաքցնէ տան բոլոր մթնոլորտը: Ընտանեկան օնախը կամ տունը կրնայ արքայական շնեղ պալատ մը ըլլալ կամ աղքատ մարդուն պարզուկ իրնիթը: Հարստութեան մատուցած բոլոր առաւելութիւններն ու դիւրութիւնները չեն կրնար տալ, ինչ որ սէրը կու տայ այդ տանը եւ սակայն սէրը պարզ եւ աղքատի իրնիթին կրնայ տալ բոլոր երջանկութիւնը, ազնուութիւնն ու քաղցրութիւնը՝ որոնք կ'ապահովեն այր մարդուն եւ բոլոր ընտանիքին նշմարիտ ու երկնային հանգիստը երկրի վրայ՝ անկիւնի մը մէջ, որ ընտանիք կը կոչուի:

ԵԹ ԿՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ

Եթէ կ'ուշենք գիտնալ թէ ՏԵՐԸ ԻՆՉՊԻՍ ՅԱՂԹԱՍԱԿ Կը ՊԱՐԳԵՒԷ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒԴ ԴԵՄ, Կարդանք.

ՍԱՂՄՈՍ 18

Կը սիրեմ քեզ, Տէ՛ր զօրութիւնս: Տէ՛ր իմ վէ՛մս, ամրութիւնս ու փրկի՛չս: Աստուածս իմ պարիսպս է, ես անոր կ'ապաւինիմ: իմ վահանս է ան, փրկութեանս զօրութիւնը, եւ իմ բարձր աշտարակս:

Օրիներգութեամբ Տէ՛ր օգնութեան կանչեցի, եւ զիս ազատեց թշնամիներեքս: Մահուան տագնապը զիս պաշարեց, կորուստի հեղեղները խոռվեցուցին զիս, մահուան աշխարհը զիս պաշարեց, եւ մահուան որոգայթները լարուեցան ինծի դէմ: Նեղութեանս մէջ Տիրոջ դիմեցի, փրկութեան համար իմ Աստուծոյս աղաղակեցի, եւ անիկա իր տահարէն լսեց ձայնս, աղաղակս անոր ականչը հասաւ: Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան անոր բարկութենէն: Անոր ժիթէն ծուխ բարձրաւաւ, բերնէն լափող կրակ ժայթքեց եւ կայծակներ սուրացին ամէն կողմ: Անիկա երկինքը խոնարհեցուց եւ իշաւ քանձար ամպի վրայ կանգնած: Քերովբէի մը վրայ հեծաւ եւ թուաւ, ու հովին թեւերով լազացաւ:

Խաւարը իրեն ծածկոյթ դարցուց, զինք շրջապատող խաւարային ջուրերն ու ամպերը՝ իրեն բնակարան: Անոր ներկայութեան փայլատակումէն ամպերը կարկուտ ու կայծակ ժայթքեցին: Տէ՛ր երկինքէն որոտաց, բարձաւալը իր ձայնը լսելի դարձուց կարկուտով ու կրակոտ կայծակներով:

Շարունակել Սաղմոս Գիրքէն